# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Ապրիլի 1-ին, երկուշաբթի.- Բ. օր Զատկի: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբղ. Մալխասյանը: Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***Ապրիլի 6-ին, շաբաթ.- Է. օր Զատկի: Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի:***

Այսօր Մայր Աթոռի Մկրտարանում Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբղ. Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Ապրիլի 7-ին, կիրակի.- Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր կիւրակէ): ԱՒԵՏՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 16):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 14-ին, կիրակի.- Գ. կիր. Աշխարհամատրան (Կանաչ կիւրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես ավագ քհն. Ներսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 19):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 21-ին, կիրակի.- Դ. կիր. (Կարմիր կիւրակէ):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 22):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Ապրիլի 24-ին, չորեքշաբթի.- ԻԵ. օր Յինանց: Յիշատակ Մեծի Եղեռնի բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յամի 1915 յԱրեւմըտեան Հայաստան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը

«Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ» (Յովհ. ԺԲ 24) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, Ապրիլյան նահատակների հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

***Ապրիլի 28-ին, կիրակի.- Ե. կիր.: Տօն Երեւման Ս. Խաչի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Հրնթացս Ս. Պատարագի տեղի ունեցավ հինգ սարկավագների քահանայական ձեռնադրություն, որից հետո պատարագիչ Սրբազան Հայրը «Ամ զխաչն եւ եկ զկնի իմ...» (Մարկ. Ժ 21) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 93):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: